

ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

2016



ՀՀ ԱՆ ԶԻԱՀ-ի կանխարգելման
հանրապետական կենտրոն

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի (ՁԻԱՀ-ի ԿՀԿ) կողմից: Հետազոտության ընդհանուր համակարգումը և գիտական ղեկավարումն իրականացրել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր Սամվել Գրիգորյանը: Հետազոտությունն իրականացրած հիմնական խմբում ներգրավված են եղել համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ Արշակ Պապոյանը, կանխարգելման բաժնի վարիչ Ժանետա Պետրոսյանը, հոգեբանասոցիալական բաժնի վարիչ Մարինե Ասրյանը, բժիշկ-վիճակագիրներ Տրդատ Գրիգորյանը և Լիլիթ Հովհաննիսյանը, բժիշկ-համաճարակաբաններ Վարդան Արզաքանյանը և Էդուարդ Հովհաննիսյանը:

Հետազոտությունն իրականացրած խումբն իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր ներգրավված են եղել հետազոտության ընթացքում, այդ թվում հետազոտության մասնակիցներին:

Հետազոտությունն իրականացվել է ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	1
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ.....	4
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	4
ԸՆՏՐԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ	5
Ընտրանքի չափը.....	5
Հետազոտության մեջ ընդգրկելու չափանիշները	5
Ընտրանքի ձևավորման մեթոդը.....	5
Իրականացնող անձնակազմը	5
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	6
Էթիկական հարցեր	6
Տվյալների պաշտպանության ապահովում	6
Հետազոտության բացերը.....	7
Երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ.....	7
Երիտասարդների սեռական կյանքի բնութագիր	8
Երիտասարդների՝ թմրամիջոցների գործածմանն առնչվող վարքագիծ.....	11
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, վարակման վտանգի ինքնագնահատում.....	12
ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը	13
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ	15
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	16
ՀԱՎԵԼՎԱԾ Ա	17
Հարցաշար.....	17

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ՋԼՄ	զանգվածային լրատվական միջոց
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՁԻԱՀ-ի ԿՀԿ	«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՎՄ	վստահության միջակայք

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցում ներկայացված են 2016թ. Հայաստանի Հանրապետությունում երիտասարդների շրջանում իրականացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ վարքագծային հետազոտությունների արդյունքները: Հետազոտության հիմնական նպատակն էր պարզել նշված խմբում ռիսկային վարքագծի դրսևորումները կանխարգելման ծրագրերի և ռազմավարությունների մշակման համար անհրաժեշտ տվյալներ ստանալու համար:

Հետազոտությունն իրականացվել է ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Երիտասարդների շրջանում 2000թ., 2002թ., 2005թ., 2007թ., 2010թ., 2012թ., 2014թ. և 2016թ. իրականացվել են վարքագծային հետազոտություններ, որոնք հնարավորություն են տվել բացահայտելու ՄԻԱՎ-ով վարակմանը և ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային գործոնները, գնահատելու ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը, ռիսկային վարքագծի փոփոխության միտումները: Ստացված տվյալները կօգտագործվեն իրականացվող կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության գնահատման և որոշումների կայացման գործընթացներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն հետազոտության նպատակներն էին՝

- պարզել երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները ,
- գնահատել ռիսկային սեռական վարքագիծը,
- գնահատել թմրամիջոցների գործածման հետ կապված վարքագիծը,
- գնահատել երիտասարդների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը,

- ստանալ տվյալներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործող ազգային ծրագրի ազդեցության և արդյունքի ցուցանիշների հաշվարկման համար,
- ստանալ տվյալներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2017-2021թթ. ազգային ծրագրի ելակետային ցուցանիշների կառուցման համար:

ԸՆՏՐԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Ընտրանքի չափը

Երիտասարդների ընտրանքի չափը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով նախկինում իրականացված նմանատիպ հետազոտությունների փորձը: Ընդհանուր առմամբ հետազոտության մեջ ընդգրկվել է 1200 երիտասարդ:

Հետազոտության մեջ ընդգրկելու չափանիշները

Երիտասարդներ՝ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 15-24 տարեկան սովորողներ:

Ընտրանքի ձևավորման մեթոդը

Երիտասարդների շրջանում վարքագծային հետազոտություններ իրականացնելու համար կիրառվել է երկաստիճան կլաստերային ընտրանքի մեթոդը: Ընտրանքը ձևավորվել է երկու փուլով: Առաջին փուլում բոլոր բուհերի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդհանուր ցանկից պատահական ընտրությամբ առանձնացվել են կլաստերները՝ ուսումնական հաստատությունները: Հետազոտության մեջ ընդգրկվելու համար ի սկզբանե բացառվել են բժշկական կրթություն տրամադրող ուսումնական հաստատությունները: Երկրորդ փուլում ընտրված կլաստերներում կատարվել է սահմանված թվով անձանց պատահական ընտրություն:

Վարքագծային հետազոտություններն իրականացվել են 12 բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Իրականացնող անձնակազմը

Իրականացնող անձնակազմն անցել է համապատասխան հրահանգավորում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Տվյալները կրկնակի մուտքագրվել, համեմատվել են և, անհամապատասխանությունների դեպքում, ուղղվել: Բոլոր տվյալները գրանցվել են մասնակցի հատուկ համարով, և հարցման մասնակիցներին չբացահայտելու նպատակով որևէ անձնական տվյալ չի գրանցվել:

Վերլուծությունը կատարվել է հետազոտությունն իրականացրած խմբի կողմից: Բոլոր տվյալները վերլուծվել են՝ օգտագործելով SPSS ծրագիրը:

Սույն զեկույցում տվյալները ներկայացված են աղյուսակների և գծապատկերների տեսքով:

Էթիկական հարցեր

ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի էթիկայի հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 2016 թվականին իրականացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների փաստաթղթերի փաթեթը, այդ թվում երիտասարդների շրջանում իրականացվելիք վարքագծային հետազոտություններին առնչվողները (հավելված Ա):

Բոլոր մասնակիցներն ընդգրկվել են հետազոտության մեջ միայն կամավորության սկզբունքով: Հետազոտությունները եղել են անանոն: Վարքագծային հետազոտություններն իրականացվել են մասնակիցների բանավոր տեղեկացված համաձայնությամբ: Հարցմանը մասնակցած բոլոր անձինք տեղեկացվել են, որ իրենց ինքնությունը բացահայտող որևէ տվյալ չի գրանցվելու հարցաթերթիկի լրացման ժամանակ, իսկ հարցման տվյալները վերլուծվելու են ամբողջ խմբի կտրվածքով, այլ ոչ թե անհատապես: Մասնակիցներին նաև բացատրվել է, որ ցանկացած պահի նրանք կարող են դադարեցնել իրենց մասնակցությունը հետազոտությանը:

Տվյալների պաշտպանության ապահովում

Հարցազրույցների ժամանակ հավաքագրված տվյալները հասանելի են եղել սահմանափակ թվով մարդկանց՝ համակարգողին, հարցազրուցավարին և տվյալները մուտքագրող մասնագետին: Տվյալների արխիվները պաշտպանված են եղել ծածկագրով և պահվել են հուսալիորեն փակվող պահարանում: Հետազոտության ավարտից հետո էլեկտրոնային և տպագիր բոլոր տվյալները պահվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում՝ փակվող սենյակում:

Հետազոտության բացերը

Բնակչության թիրախային խմբերի շրջանում անցկացվող վարքագծային տարբեր հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակիցների՝ ռիսկային վարքագծին առնչվող որոշ հարցերի (օրինակ՝ պահպանակի, թմրամիջոցների, ներարկման պարագաների գործածմանը, զուգընկերների թվին վերաբերող հարցեր) պատասխանները կարող են բացարձակ նույնությամբ չարտացոլել հարցման ենթարկվածի վարքագծային առանձնահատկությունները: Դրանք կարող են լինել կա՛մ որոշակիորեն չափազանցված, կա՛մ, ընդհակառակը, նվազեցված: Հարցման ենթարկվածները նաև պետք է հիշեին մինչև մեկ տարվա ընթացքում իրենց դրսևորած վարքագծերը, ինչը կարող էր ազդել պատասխանների ճշգրտության վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ

Ընդհանուր առմամբ հարցման է ենթարկվել 1200 երիտասարդ, որոնց մեծամասնությունը՝ 65,6%-ը, 15-19 տարիքային խմբում էր (աղյուսակ 1): Միջին տարիքը կազմել է 18,7, մեդիանան՝ 19 (սահմաններ՝ 18,6-18,8):

Հարցման ենթարկվածների 62,6%-ը եղել է իգական, 37,4-ը՝ արական սեռի ներկայացուցիչ: Քաղաքաբնակները կազմել են 82,6%, գյուղաբնակները՝ 17,4%:

Հարցման ենթարկվածների կեսից ավելին՝ մոտ 53%-ն ուներ թերի բարձրագույն կրթություն: Ճնշող մեծամասնությունը՝ 97,7%-ը, ամուսնացած չէր:

Աղյուսակ 1. Երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները

	N = 1200	
	n	% (95% ՎՄ)
Տարիքային խումբ		
15-19	787	65,6 (63,1-68,3)
20-24	413	34,4 (31,7-36,9)
Մեդիանա, միջին տարիք, սահմաններ		19; 18,7 (18,6-18,8)
Սեռ		
Արական	448	37,4 (34,6-40,1)
Իգական	749	62,6 (59,9-65,4)

		N = 1200	
		n	% (95% ՎՄ)
Բնակավայր			
Քաղաք		984	82,6 (80,3-84,7)
Գյուղ		208	17,4 (15,3-19,7)
Կրթություն			
Թերի միջնակարգ		19	1,6 (0,9-2,4)
Միջնակարգ		67	5,6 (4,3-7,1)
Միջին մասնագիտական		313	26,3 (23,9-28,9)
Թերի բարձրագույն		628	52,9 (49,9-55,5)
Բարձրագույն		161	13,6 (11,6-15,6)
Ընտանեկան կարգավիճակ			
Ամուրի		1168	97,7 (96,8-98,5)
Ամուսնացած		19	1,6 (0,8-2,3)
Ամուսնալուծված		7	0,6 (0,2-1,0)
Քաղաքացիական ամուսնություն		1	0,1 (0,0-0,3)
Այրի		1	0,1 (0,0-0,3)

Երիտասարդների սեռական կյանքի բնութագիր

Երբևէ սեռական հարաբերություն ունեցել է հարցման ենթարկվածների 25,7%-ը (աղյուսակ 2): Նրանց գերակշռող մեծամասնության՝ 87,2%-ի տարիքը սեռական առաջին հարաբերության ժամանակ եղել է 15-19: Միջին տարիքը սեռական առաջին հարաբերության ժամանակ կազմել է 16,6, իսկ մեդիանան՝ 16 (սահմանները՝ 16,4-16,8):

Վերջին 30 օրվա ընթացքում սեռական հարաբերություն ունեցել է հարցման ենթարկվածների 38,6%-ը, որոնցից սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ է օգտագործել 71,4%-ը:

Երիտասարդների 47,2%-ը նշել է, որ վերջին մեկ տարվա ընթացքում ունեցել է պատահական զուգընկերներ, ընդ որում նրանց գերակշռող մեծամասնությունը՝ մոտ 75%-ը՝ երկու և ավելի զուգընկեր:

Պատահական զուգընկերոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործել է 86,1%-ը: Պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ օգտագործում է հարցման ենթարկվածների 65,7%-ը: Պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ չօգտագործելու հիմնական պատճառների թվում են հաճույքի նվազեցումը՝ 75%, զուգընկերոջ նկատմամբ վստահությունը՝ մոտ 23%, իսկ հարցման ենթարկվածների 25%-ը պահպանակ օգտագործում է միայն հղիության կանխման նպատակով:


Աղյուսակ 2. Երիտասարդների սեռական կյանքի բնութագրիչներ

	N = 1200	
	n	% (95% ՎՄ)
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն		
Այո	308	25,7 (23,4-28,2)
Տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ		
10-14	26	8,5 (5,6-11,8)
15-19	266	87,2 (83,0-90,8)
20-24	13	4,3 (2,0-6,6)
Մեղիանա, միջին տարիք, սահմաններ		16; 16,6; (16,4-16,8)
Պահպանակի օգտագործումը առաջին սեռական հարաբերության ժամանակ		
Այո	256	83,7 (79,4-87,5)
Սեռական հարաբերություն վերջին 30 օրվա ընթացքում		
Այո	119	38,6 (33,3-44,4)
Պահպանակի օգտագործումը սեռական վերջին հարաբերության ժամանակ		
Այո	85	71,4 (62,4-79,3)
Սեռական հարաբերություն պատահական զուգընկերոջ հետ վերջին մեկ տարվա ընթացքում		
Այո	144	47,2 (41,5-53,1)
Պատահական զուգընկերների թիվը վերջին մեկ տարվա ընթացքում		
1	36	25,2 (18,5-32,6)
2	38	26,6 (19,6-34,3)
3	25	17,5 (11,6-23,9)
4	16	11,2 (6,3-16,3)
5 և ավելի	28	19,6 (13,0-26,2)
Մեղիանա, միջին թիվ, սահմաններ		2; 3 (2,7-3,3)
Պահպանակի օգտագործումը պատահական զուգընկերոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ		
Այո	118	86,1 (80,3-92,0)
Պահպանակի օգտագործման հաճախականությունը պատահական զուգընկերոջ հետ վերջին մեկ տարվա ընթացքում		
Ամեն անգամ	92	65,7 (57,3-73,7)
Ոչ միշտ	40	28,6 (21,0-36,2)
Երբեք	8	5,7 (2,2-10,0)
Պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ չօգտագործելու պատճառները		
Շատ թանկ է	2	4,2 (0,0-10,6)
Ամաչում է գնել	2	4,2 (0,0-10,6)

	N = 1200	
	n	% (95% ՎՄ)
Դժվար է օգտագործել	1	2,1 (0,0-6,5)
Այնքան էլ հեշտ չէ ձեռք բերել	-	-
Նվազեցնում է հաճույքը	36	75 (62,2-87,8)
Ամաչում է խնդրել զուգընկերոջը օգտագործել	1	2,1 (0,0-6,4)
Վստահում է զուգընկերոջը	11	22,9 (10,9-35,4)
Չգիտի պահպանակի օգտագործման արդյունավետության մասին	-	-
Օգտագործում է հղիության կանխարգելման համար	12	25 (14,3-38,3)
Պահպանակի օգտագործման հաճախականությունը վերջին մեկ տարվա ընթացքում (բոլոր զուգընկերների հետ)		
Ամեն անգամ	186	61,2 (55,1-67,0)
Ոչ միշտ	99	32,6 (26,9-38,2)
Երբեք	19	6,3 (3,6-8,9)
Մշտապես պահպանակ չօգտագործելու պատճառները (բոլոր զուգընկերների հետ)		
Շատ թանկ է	3	2,6 (0,0-5,9)
Ամաչում է գնել	4	3,4 (0,8-7,6)
Դժվար է օգտագործել	2	1,7 (0,0-4,3)
Այնքան էլ հեշտ չէ ձեռք բերել	1	0,9 (0,0-2,6)
Նվազեցնում է հաճույքը	70	60,3 (50,9-69,2)
Ամաչում է խնդրել զուգընկերոջը օգտագործել	4	3,4 (0,8-6,9)
Վստահում է զուգընկերոջը	55	47,4 (39,1-57,3)
Չգիտի պահպանակի օգտագործման արդյունավետության մասին	-	-
Օգտագործում է հղիության կանխարգելման համար	19	16,4 (9,6-23,3)

Հարցման ենթարկվածների 61,2%-ն է վերջին մեկ տարվա ընթացքում բոլոր զուգընկերների հետ մշտապես պահպանակ օգտագործել: Մշտապես պահպանակ չօգտագործելու հիմնական պատճառներն են հաճույքի նվազեցումը՝ 60,3%, զուգընկերոջ նկատմամբ վստահությունը՝ 47,4%:

Գծապատկեր 1. Պահպանակի օգտագործումը տարբեր զուգընկերների հետ



Երիտասարդների՝ թմրամիջոցների գործածմանն առնչվող վարքագիծ

Երբևէ թմրամիջոցներ գործածել է հարցման ենթարկվածներից 66-ը (5,5%) (աղյուսակ 3): Նրանց 86,2%-ն առաջին անգամ թմրամիջոց գործածել է 15-19 տարեկան հասակում: Հարցման ենթարկվածների միջին տարիքն առաջին անգամ թմրամիջոց օգտագործելիս կազմել է 17,2, իսկ մեդիանան՝ 17 (սահմաններ՝ 16,7-17,6):

Աղյուսակ 3. Երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածումը

N = 1200		
	n	% (95% ՎՄ)
Երբևէ գործածել են թմրամիջոցներ		
Այո	66	5,5 (4,3-6,8)
Տարիքն առաջին անգամ թմրամիջոց գործածելիս		
10-14	1	1,7 (0,0-5,2)
15-19	50	86,2 (75,9-94,8)
20-24	7	12,1 (3,4-20,7)
Մեդիանա, միջին տարիք, սահմաններ		17; 17,2 (16,7-17,6)
Կյանքի ընթացքում առավել հաճախ օգտագործված թմրամիջոցը		
Կանեփ/մարիխուանա	60	96,8 (91,9-100)
Երբևէ գործածել է թմրամիջոց ներարկային ճանապարհով		
Այո	2	3,2 (0,0-8,3)
Տարիքն առաջին անգամ ներարկային ճանապարհով թմրամիջոց գործածելիս		
Մեդիանա, միջին տարիք, սահմաններ		19; 19 (18-20)

Ներարկային ճանապարհով թմրամիջոցներ գործածել է թմրամիջոցների գործածման փորձ ունեցողներից միայն 2-ը (3,2%): Նրանց միջին տարիքը և մեդիանան առաջին անգամ ներարկային ճանապարհով թմրամիջոց գործածելիս կազմել են 19 (սահմաններ՝ 18-20):

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, վարակման վտանգի ինքնագնահատում

Գրեթե բոլոր հարցման ենթարկվածները՝ 98,6%-ը, լսել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին (աղյուսակ 4), ըստ որում 66,4%-ը՝ դպրոցում, 42,1%-ն այդ մասին իմացել են ՁԼՄ-ներից, 35,5%-ը՝ համացանցից: Հարցման ենթարկվածների 62,3%-ը բացառում, իսկ 34,1%-ը քիչ հավանական է համարում իր՝ ՄԻԱՎ-ով վարակվելու հնարավորությունը:

Վերջին 12 ամսվա ընթացքում հարցման ենթարկվածների ընդամենը 3,7%-ն է հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ, 92,5% էլ տեղեկացվել է հետազոտության արդյունքի մասին:

Աղյուսակ 4. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, վարակման վտանգի ինքնագնահատում

		N =1200	
	n	% (95% ՎՄ)	
Երբևէ լսել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին			
Այո	1180	98,6 (97,9-99,2)	
Ոչ	17	1,4 (0,8-2,1)	
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին իմանալու աղբյուրը			
Ընտանիք	123	10,5 (8,8-12,3)	
Ընկերներ/հասակակիցներ	210	18,0 (16,0-20,3)	
ՁԼՄ-ներ	492	42,1 (39,3-45,0)	
Դպրոց	776	66,4 (63,8-69,2)	
Սոցիալական աշխատողներ	94	8,0 (6,5-9,8)	
Բուժաշխատողներ	224	19,2 (16,9-21,6)	
Խորհրդատվական ծառայություններ	67	5,7 (4,5-7,0)	
Համացանց	416	35,5 (32,7-38,3)	
ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգի ինքնագնահատումը			
Շատ հավանական է	41	3,5 (2,5-4,7)	
Քիչ հավանական է	395	34,1 (31,2-37,0)	
Բացառվում է	721	62,3 (59,5-65,3)	

		N =1200
		n
		% (95% ՎՄ)
Վերջին 12 ամսվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվածներ		
Այո	44	3,7 (2,7-4,7)
Ոչ	1143	96,3 (95,3-97,3)
Հետազոտության արդյունքների մասին իմացածներ		
Այո	37	92,5 (82,5-100)
Ոչ	3	7,5 (0,0-17,5)

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը

Հարցման ենթարկվածների մեծամասնությունը՝ 59,7%-ը, կարծում է, որ ՄԻԱՎ-ով վարակման վտանգը հնարավոր է նվազեցնել՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով, 69,7%-ի կարծիքով ՄԻԱՎ-ով վարակման վտանգը հնարավոր է նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով, 71,3%-ը գիտի, որ հնարավոր է վարակված լինել ՄԻԱՎ-ով, բայց ունենալ առողջ արտաքին: Եթե ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս ՄԻԱՎ-ով վարակվելու հնարավորությունը բացառում է հարցման ենթարկվածների 77,8%-ը, իսկ ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու հետ համատեղ սնունդ ընդունելիս՝ 66,5%-ը, ապա մոծակի կծելու միջոցով ՄԻԱՎ-ով վարակվելու անհնարինության մասին գիտի հարցման ենթարկվածների ընդամենը 45,8%-ը: Հարցման ենթարկվածների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է մոտ 40% (աղյուսակ 5):

Աղյուսակ 5. ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքները

		N = 1200
		n
		% (95% ՎՄ)
Հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով		
Այո	716	59,7 (56,8-62,7)
Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով		
Այո	833	69,7 (67,1-72,5)
Կարո՞ղ է առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված		
Այո	852	71,3 (68,8-73,9)
Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով մոծակի կծելու միջոցով		
Ոչ	548	45,8 (42,6-48,5)

		N = 1200
	n	% (95% ՎՄ)
Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակով հիվանդի հետ համատեղ սնունդ ընդունելիս		
Ոչ	797	66,5 (63,8-69,1)
Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս		
Ոչ	933	77,8 (75,4-79,8)
ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ	474	39,9 (37,0-42,6)

**ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԻ ՈՉ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՏԱՐԲԵՐ
ՁՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ**

Հարցման ենթարկվածների 47,2%-ը վերջին մեկ տարվա ընթացքում ունեցել է պատահական զուգընկեր, որից մոտ 75%-ը՝ մեկից ավելի: Պատահական զուգընկերոջ հետ մշտապես պահպանակ օգտագործում է հարցման ենթարկվածների 65,7%-ը: Վերջին մեկ տարվա ընթացքում բոլոր զուգընկերների հետ մշտապես պահպանակ օգտագործել է հարցման ենթարկվածների 61,2%-ը:

**ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՑԱԾԻ
ՄԱԿԱՐԴԱԿ ԵՎ ՄԻԱՎ-ՈՎ ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ՎՏԱՆԳԻ ԲԱՑԱՌՄԱՆ ԲԱՐՁՐ
ՄԱԿԱՐԴԱԿ**

Երիտասարդների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը թեև 2014թ. համեմատ մոտ 2 անգամ բարձրացել է (գիտելիքների գնահատման ցուցանիշը՝ մոտ 40%), սակայն հեռու է բավարար լինելուց: Միաժամանակ հարցման ենթարկվածների 62,3%-ը բացառում, իսկ 34,1%-ը քիչ հավանական է համարում իր՝ ՄԻԱՎ-ով վարակվելու հնարավորությունը:

Վերոնշյալը վկայում է, որ երիտասարդները ոչ բավարար են տեղեկացված ռիսկային վարքագծերի վերաբերյալ: Անհրաժեշտ են աշխատանքներ նրանց շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման մասին գիտելիքների բարելավման և վարակման վտանգի նվազեցման համար:

Հաշվի առնելով այն, որ հարցման ենթարկվածների մեծամասնությունը (66,4%) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին իմացել է դպրոցում, 42,1%-ը՝ ՁԼՄ-ներից, 35,5%-ը՝ համացանցից, անհրաժեշտ է շարունակել կիրառել տեղեկատվության նշված աղբյուրները երիտասարդների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱԾԻ ՄԱԿԱՐԴԱԿ

Վերջին 12 ամսվա ընթացքում հարցման ենթարկվածների միայն 3,7%-ն է հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ, 92,5% էլ տեղեկացվել է հետազոտության արդյունքի մասին:

Հաշվի առնելով այն, որ հարցման ենթարկվածների մոտ կեսը վերջին մեկ տարվա ընթացքում ունեցել է պատահական զուգընկեր, ընդ որում նրանց մոտ 1/3-ը չի օգտագործել պահպանակ, ինչպես նաև վերջին 12 ամսվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվածների չափազանց փոքր թիվը (3,7%), կարիք կա ընդլայնելու

երիտասարդների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելու շարժառիթի ձևավորմանն ու հետազոտության մասսայականացմանն ուղղված աշխատանքները՝ մեծացնելով երիտասարդներին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության տրամադրումը:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընդլայնել երիտասարդների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումները՝ ՄԻԱՎ վարակի կանխարգելման մասին գիտելիքների բարելավման և վարակման վտանգի նվազեցման համար:
- Ընդլայնել երիտասարդների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելու շարժառիթի ձևավորմանն ու հետազոտության մասսայականացմանն ուղղված աշխատանքները՝ մեծացնելով երիտասարդներին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության տրամադրումը:
- Բարձրացնել երիտասարդների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ իրազեկվածությունը և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության հասանելիությունը հանրային միջոցառումների միջոցով:
- Բարձրացնել երիտասարդների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ իրազեկվածությունը կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ և համացանցի, սոցիալական ցանցերի հնարավորությունները:
- Շարունակել դպրոցներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով ուսուցումը
- Երիտասարդների շրջանում պարբերաբար իրականացնել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ վարքագծային հետազոտություններ ՄԻԱՎ-ով վարակմանը և ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային գործոնները բացահայտելու, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը գնահատելու և ռիսկային վարքագծի փոփոխության միտումները մոնիտորինգի ենթարկելու նպատակով:

ՀԱՐՑԱՇԱՐ

Մաս 1. Ժողովրդագրական բնութագրիչներ

h/h	Հարց	Պատասխան
101	Տարիքը	_____
102	Սեռը	<input type="checkbox"/> արական 1 <input type="checkbox"/> իգական 2
103	Բնակավայրը	<input type="checkbox"/> քաղաք 1 <input type="checkbox"/> գյուղ 2
104	Կրթությունը	<input type="checkbox"/> թերի միջնակարգ 1 <input type="checkbox"/> միջնակարգ 2 <input type="checkbox"/> միջին մասնագիտական 3 <input type="checkbox"/> թերի բարձրագույն 4 <input type="checkbox"/> բարձրագույն 5
105	Ընտանեկան կարգավիճակը	<input type="checkbox"/> չամուսնացած 1 <input type="checkbox"/> ամուսնացած 2 <input type="checkbox"/> ամուսնալուծված 3 <input type="checkbox"/> քաղաքացիական ամուսնություն 4 <input type="checkbox"/> այրի 5

Մաս 2. Սեռական կյանքին և պահպանակի օգտագործմանն առնչվող հարցեր

h/h	Հարց	Պատասխան
<p><i>Ցանկանում ենք Ձեզ մի քանի հարց ուղղել Ձեր սեռական վարքագծի վերաբերյալ: Մենք հասկանում ենք, թե որքան են այդ հարցերն անձնական, բայց միաժամանակ ցանկանում ենք մեկ անգամ ևս նշել, որ Ձեր անձի գաղտնիությունը լիովին պահպանված է, և որ նույն հարցերն ուղղվում են բոլոր հարցման ենթարկվողներին: Սեռական հարաբերությունները ներառում են հեշտոցային և անալ հարաբերությունները:</i></p>		
201	Երբևիցե ունեցե՞լ եք սեռական հարաբերություններ Եթե «ոչ», անցե՛ք 301 հարցին:	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
202	Ո՞ր տարիքում եք առաջին անգամ սեռական հարաբերություն ունեցել	_____ <input type="checkbox"/> չի պատասխանել 99
203	Դուք (կամ Ձեր զուգընկերը) օգտագործե՞լ եք պահպանակ առաջին սեռական հարաբերության ժամանակ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
204	Ունեցե՞լ եք սեռական հարաբերություններ վերջին 30 օրվա ընթացքում	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

h/h	Հարց	Պատասխան
205	Դուք (կամ Ձեր զուգընկերը) օգտագործե՞լ եք պահպանակ սեռական վերջին հարաբերության ժամանակ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
206	Վերջին մեկ տարվա ընթացքում ունեցե՞լ եք պատահական զուգընկեր (պատահական զուգընկեր, որը Ձեր ամուսինը կամ կինը չէ (անկախ նրանից՝ քաղաքացիական, թե գրանցված ամուսնություն) կամ ընկերը/ ընկերուհին չէ) Եթե «ոչ», անցե՛ք 211 հարցին:	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
207	Եթե այո, քանի՞ պատահական սեռական զուգընկեր եք ունեցել վերջին մեկ տարվա ընթացքում	<hr/> <input type="checkbox"/> չի պատասխանել 99
208	Պատահական զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ Դուք (կամ Ձեր զուգընկերը) օգտագործե՞լ եք պահպանակ	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
209	Վերջին 1 տարվա ընթացքում պատահական զուգընկերոջ հետ սեռական հարաբերության ժամանակ որքա՞ն հաճախ եք պահպանակ օգտագործել Եթե «ամեն անգամ», անցե՛ք 211 հարցին:	<input type="checkbox"/> ամեն անգամ 1 <input type="checkbox"/> ոչ միշտ 2 <input type="checkbox"/> երբեք 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
210	Ինչո՞ւ մշտապես պահպանակ չեք օգտագործում պատահական զուգընկերոջ հետ սեռական հարաբերության ժամանակ (հնարավոր է մի քանի պատասխան)	<input type="checkbox"/> շատ թանկ է 1 <input type="checkbox"/> ամաչում եմ գնել 2 <input type="checkbox"/> դժվար է օգտագործել 3 <input type="checkbox"/> այդքան էլ հեշտ չէ ձեռք բերել 4 <input type="checkbox"/> նվազեցնում է հաճույքը 5 <input type="checkbox"/> ամաչում եմ զուգընկերոջը խնդրել օգտագործել 6 <input type="checkbox"/> վստահում եմ զուգընկերոջս 7 <input type="checkbox"/> չգիտեմ պահպանակի գտագործման արդյունավետության մասին 8 <input type="checkbox"/> օգտագործում եմ միայն հղիության կանխման նպատակով 9 <input type="checkbox"/> այլ (նշել)_____ 97 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

h/h	Հարց	Պատասխան
211	Վերջին մեկ տարվա ընթացքում որքա՞ն հաճախ եք պահպանակ օգտագործել Եթե «ամեն անգամ», անցե՛ք 301 հարցին	<input type="checkbox"/> ամեն անգամ 1 <input type="checkbox"/> ոչ միշտ 2 <input type="checkbox"/> երբեք 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
212	Ինչո՞ւ մշտապես պահպանակ չեք օգտագործում (հնարավոր է մի քանի պատասխան)	<input type="checkbox"/> շատ թանկ է 1 <input type="checkbox"/> ամաչում եմ գնել 2 <input type="checkbox"/> դժվար է օգտագործել 3 <input type="checkbox"/> այդքան էլ հեշտ չէ ձեռք բերել 4 <input type="checkbox"/> նվազեցնում է հաճույքը 5 <input type="checkbox"/> ամաչում եմ զուգընկերոջս խնդրել օգտագործել 6 <input type="checkbox"/> վստահում եմ զուգընկերներիս 7 <input type="checkbox"/> չգիտեմ պահպանակի օգտագործման արդյունավետության մասին 8 <input type="checkbox"/> օգտագործում եմ միայն հղիության կանխման նպատակով 9 <input type="checkbox"/> այլ (նշել)_____ 97 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

Մաս 3. Թմրամիջոցների օգտագործմանն առնչվող հարցեր

h/h	Հարց	Պատասխան
<p><i>Ցանկանում եմք Ձեզ մի քանի հարց ուղղել թմրամիջոցների գործածման վերաբերյալ: Հավաստիացնում ենք, որ գաղտնիությունն ապահովված է: Հիշե՛ք, որ բոլոր հարցման ենթարկվողներին տրվում են նույն հարցերը:</i></p>		
301	Երբևիցե օգտագործե՞լ եք թմրամիջոց <i>Եթե «ոչ», անցե՛ք 401 հարցին:</i>	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
302	Ո՞ր տարիքում եք առաջին անգամ թմրամիջոց օգտագործել	<input type="checkbox"/> _____ <input type="checkbox"/> չի պատասխանել 99
303	Կյանքի ընթացքում օգտագործե՞լ եք նշված թմրամիջոցներից որևէ մեկը (հնարավոր է մի քանի պատասխան)	<input type="checkbox"/> կանեփ/մարիխուանա (պլան, անաշա, հաշիշ) 1 <input type="checkbox"/> տրանկվիլիզատորներ (դիազեպամ, տազեպամ) 2 <input type="checkbox"/> էքստազի 3 <input type="checkbox"/> ցնդող նյութեր (սոսինձ, ացետոն) 4 <input type="checkbox"/> ամֆետամիններ 5 <input type="checkbox"/> կոքայն 6

h/h	Հարց	Պատասխան
		<input type="checkbox"/> հերոին 7 <input type="checkbox"/> մեթադոն 8 <input type="checkbox"/> կոկաին 9 <input type="checkbox"/> չերնյաշկա 10 <input type="checkbox"/> դեզոմորֆին (բենզին) 11 <input type="checkbox"/> ցավազրկողներ 12 <input type="checkbox"/> այլ _____ 97 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
304	Երբևիցե օգտագործել էք թմրամիջոցներ ներարկային ճանապարհով	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
305	Ո՞ր տարիքում եք առաջին անգամ թմրամիջոց օգտագործել ներարկային ճանապարհով	_____ <input type="checkbox"/> չի պատասխանել 99

Մաս 4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ հարցեր

h/h	Հարց	Պատասխան
401	Լսե՞լ եք արդյոք ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
402	Որտեղի՞ց եք լսել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին (հնարավոր է մի քանի պատասխան)	<input type="checkbox"/> ընտանիքում 1 <input type="checkbox"/> ընկերներից/հասակակիցներից 2 <input type="checkbox"/> ՁԼՄ-ներից 3 <input type="checkbox"/> դպրոցում 4 <input type="checkbox"/> սոցիալական աշխատողներից 5 <input type="checkbox"/> բուժաշխատողներից 6 <input type="checkbox"/> խորհրդատվական ծառայություններից 7 <input type="checkbox"/> համացանց (ինտերնետ) 8 <input type="checkbox"/> այլ _____ 97 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
403	Ինչպե՞ս եք գնահատում ՄԻԱՎ-ով Ձեր վարակվելու հավանականությունը	<input type="checkbox"/> շատ հավանական է 1 <input type="checkbox"/> քիչ հավանական է 2 <input type="checkbox"/> բացառվում է 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
404	Վերջին 12 ամսվա ընթացքում հետազոտվե՞լ եք արդյոք ՄԻԱՎ-ի վերաբերյալ Եթե «ոչ» կամ «չեմ ցանկանում պատասխանել», անցե՛ք 501 հարցին	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

h/h	Հարց	Պատասխան
405	Իմացե՞լ եք արդյոք հետազոտության արդյունքների մասին	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չի պատասխանել 99

Մաս 5. ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը գնահատելու համար հարցեր

h/h	Հարց	Պատասխան
501	Հնարավո՞ր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չգիտեմ 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
502	Հնարավո՞ր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չգիտեմ 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
503	Կարո՞ղ է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չգիտեմ 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
504	Հնարավո՞ր է վարակվել ՄԻԱՎ-ով մոծակի կծելու միջոցով	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չգիտեմ 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
505	Հնարավո՞ր է ՄԻԱՎ-ով վարակվել ՄԻԱՎ վարակով հիվանդի հետ համատեղ սնունդ ընդունելիս	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չգիտեմ 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99
506	Հնարավո՞ր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս	<input type="checkbox"/> այո 1 <input type="checkbox"/> ոչ 2 <input type="checkbox"/> չգիտեմ 3 <input type="checkbox"/> չի պատասխանել 99